ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի N 125-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԵՎ ԹՈՐՈՍԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱՂՈՒՆԻԿ ՄԱՆՈՒԿԻ ՅԱՎՐՈՒՄՅԱՆԻՆ, ԱԼԻՍԱ ՀՐԱՉԻԿԻ ՎԱՂԱՐՇՅԱՆԻՆ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ԿԱՐԼԵՆԻ ՀՈՎԱԿՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի թիվ 22-Ն որոշման հավելվածի 16-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի եզրակացությունը և քաղաքացիներ՝ Աղունիկ Յավրումյանի, Ալիսա Վաղարշյանի և Սվետլանա Հովակյանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումները. ***որոշում եմ***

Հայաստանի Հանրապետության Շիրակ մարզի Աշոցք համայնքի 2022 թվականի բյուջեով նախատեսված «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից, (բաժին 10, խումբ 4, դաս 1, տող 3040 «Ընտանիքի անդամներ և զավակներ») Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք և Թորոսգյուղ բնակավայրերի բնակչներին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝

1. Աղունիկ Մանուկի Յավրումյան - /բնակավայր Աշոցք/ 80.000 / ութսուն հազար դրամ/:
2. Ալիսա Հրաչիկի Վաղարշյան - /բնակավայր Աշոցք/ 15.000 / տասնհինգ հազար դրամ/:
3. Սվետլանա Կարլենի Հովակյան - /բնակավայր Թորոսգյուղ/ 80.000 / ութսուն հազար դրամ/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի հուլիսի 12
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2022 թվականի N 126 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՐԳԻՍ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ, ՏԻԿՈՒՇ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ, ԳԱՐԻԿ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-054-006-009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի հուլիսի 13-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած Գարիկ Թորոսյանի դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Սարգիս Թորոսյանին, Տիկուշ Աբրահամյանին, Սուսաննա Քոթանջյանին, Գարիկ Թորոսյանին և Տիգրանուհի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Կարմրավան, 1-ին փողոց, բնակելի տուն 26, հասցեում գտնվող, 08-054-006-009 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված՝ 2003 թվականի օգոստոսի 4-ին, վկայական N 1700402/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Կարմրավան, 1-ին փողոց, բնակելի տուն 26:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի հուլիսի 13
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2022 թվականի N 127 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 21-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի մարտի 2-ի <<Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին>> N Մ-02032022-08-0002 որոշումը, **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք Համայնք, գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, թիվ 27/8 և Աշոցք համայնք, գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, թիվ 24/4 հասցեներում գտնվող Սաղաթել Մերուժանի Մուրադյանին սեփականությամբ իրավունքով պատկանող 1.35989 հեկտար ընդհանուր մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող 0.041561 հեկտար մակերեսով անասնաշենքը որպես մեկ գույքային միավոր միավորելու և փոստային հասցե տրամադրելու մասին» N 21-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշման 1-ին կետի 3-րդ տողում՝ «27/4» թիվը փոխարինել «24/4» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2022 թվականի հուլիսի 13
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2022 թվականի N 128 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 08-015-0037-0019-ԻՑ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Արթուր Կառլենի Ավետիսյանը և Ռուզան Հովհաննեսի Ավետիսյանը դիմել են (դիմումը մուտքագրված Աշոցքի համայնքապետարանում 2022 թվականի հուլիսի 13-ին, մտից 723) Աշոցքի համայնքի ղեկավարին Շիրակի մարզ համայնք Աշոցքի Աշոցք բնակավայրում գընվող, 08-015-0037-0019-ից կադաստրային ծածկագրվ 0.007306 հա մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության անասնաշենքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչելու խնդրանքով:

Ղեկավարվելով՝ << Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով, որ դրանք կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, **որոշում եմ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Արթուր Կառլենի Աետիսյանի /ծնված՝ 1960 թականի մարտի 3-ին/ և Ռուզան Հովհաննեսի Ավետիսյանի /ծնված՝ 1968 թականի հոկտեմբերի 10-ին/ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք գյուղում գտնվող, 08-015-0037-0019-ից կադաստրային ծածկագրվ 0.007306 հեկտար

մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության անասնաշենքի նկատմամբ:

2. Քաղաքացիներ Արթուր Կառլենի Ավետիսյանին և Ռուզան Հովհաննեսի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղ Աշոցք 4-րդ փողոց, անասնաշենք 3/8 հասցեում գտնվող 08-015-0037-0019-ից կադաստրային ծածկագրով բնակելի նշանակության անասնաշենքի տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ,Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 4-րդ փողոց, անասնաշենք 3/8:

3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի հուլիսի 13
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2022 թվականի N 129 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄԱՄԻԿՈՆ ՀԱԿՈԲԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ, ՓԱՅԼԱՆՈՒՇ ՔԵՐՈԲԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ, ԱՐԱՄԱՅԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ, ՍԵՐԳԵՅ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ, ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-019-0014-0005-001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի հուլիսի 14-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած Մամիկոն Գասպարյանի դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Մամիկոն Հակոբի Գասպարյանին, Փայլանուշ Քերոբի Գասպարյանին, Արամայիս Գասպարյանին, Սերգեյ Գասպարյանին, Մամիկոն Գասպարյանին և Գայանե Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ,Սարապատ համայնք, գյուղ Արփենի, 5-րդ փողոց, բնակելի տուն 9, հասցեում գտնվող, 08-019-0014-0005-001 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /վկայական N 27092021-08-0011/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Արփենի, 5-րդ փողոց, բնակելի տուն 9:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի հուլիսի 14
գյուղ Աշոցք